ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ
14 փետրվարի 2023 թվական

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 10/1
ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ 10-ՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ 1-ԻՆ ՆԻՍՏԻ

Նիստին մասնակցում էր Երևանի ավագանու 51 անդամ:

Նիստը վարում էր Երևանի քաղաքապետ Հրաչյա Սարգսյանը:

Երևանի ավագանու նիստին հրավիրված էին՝ Երևանի քաղաքապետի տեղակալներ՝ Տիգրան Ավինյանը, Գևորգ Սիմոնյանը, Ստեփան Մաչյանը, քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարի պաշտոնակատար Սեյրան Մեջլումյանը, քաղաքապետի խորհրդականներ՝ Կամո Արեյանը, Արամ Դանիելյանը, Սուսաննա Գրիգորյանը, Կորյուն Մկրտչյանը, Արամ Դանիելյանը, Գարիկ Բարսեղյանը, Սաշա Կատվալյանը, քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետ Վահան Խաչատրյանը, իրավաբանական վարչության պետ Տարոն Մարգարյանը, կազմակերպական վարչության պետ Արմինե Վարդանյանը, մշակույթի և տուրիզմի վարչության պետ Գոշ Սարգսյանը, առևտրի և ծառայությունների վարչության պետ Հովիկ Սաֆարյանը, եկամուտների հաշվառման և գանձման վարչության պետի պաշտոնակատար Արման Ջհանգիրյանը, ֆինանսական վարչության պետ Վիլեն Արևշատյանը, առողջապահության վարչության պետի պաշտոնակատար Յակով Ասատրյանը, քարտուղարության պետի պաշտոնակատար Էդգար Աբրահամյանը և Կենտրոն վարչական շրջանի ղեկավար Սամվել Ղուկասյանը:

Երևանի քաղաքապետ Հրաչյա Սարգսյանի կողմից առաջարկվեց Երևանի ավագանու հերթական նիստը գումարել 2023 թվականի մարտի 15-ին, ժամը 11.00-ին:

ՈՐՈՇՎԵՑ – Երևանի ավագանու հերթական նիստը գումարել 2023 թվականի մարտի 15-ին, ժամը 11.00-ին:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 47 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 46, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0

Որոշումն ընդունվել է միաձայն:

Երևանի քաղաքապետ Հրաչյա Սարգսյանը հայտնեց, որ 2023 թվականի փետրվարի 14-ի հերթական նիստի օրակարգի նախագծում ընդգրկված է 24 հարց, որից՝ 2-ից 12-րդ հարցերը չզեկուցվող են, դրանք են.

2. Երևանի ավագանու 10-րդ նստաշրջանի ժամանակավոր հաշվիչ հանձնաժողովի կազմը հաստատելու մասին: (Չզեկուցվող)

3. Գրիգոր Նարեկացի» բժշկական կենտրոն փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության փոփոխությունը հաստատելու մասին: (Չզեկուցվող)

4. «Երևան» բժշկական կենտրոն փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության փոփոխությունը հաստատելու մասին: (Չզեկուցվող)

5. Գույքը սեփականության իրավունքով անհատույց հանձնելու մասին: (Չզեկուցվող)

6. Գույք նվիրաբերելու մասին: (Չզեկուցվող)

7. 2009 թվականից մինչև 2017 թվականը ներառյալ ժամանակահատվածում առաջացած, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի արխիվում պահպանվող, Երևան համայնքի սեփականությունը համարվող որոշ արխիվային փաստաթղթերի սեփականության իրավունքը պետական արխիվային սեփականության փոխանցելու մասին: (Չզեկուցվող)

8. Երևան քաղաքի ավագանու 2021 թվականի փետրվարի 9-ի N325-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին: (Չզեկուցվող)

9.Կազմակերպված ծառայողական ավտոկայանատեղերի շահագործումը շարունակելու իրավունք տալու մասին: (Չզեկուցվող)

10. Երևան քաղաքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 27-ի N693-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին: (Չզեկուցվող)

11. Երևան քաղաքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 27-ի N693-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին: (Չզեկուցվող)

12. Երևան քաղաքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 27-ի N693-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին: (Չզեկուցվող)

Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ, ավագանու քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Նուարդ Վարդանյանն առաջարկեց օրակարգի նախագծի զեկուցվող 17-րդ՝ «Հողամասերի նպատակային նշանակությունները փոխելու մասին» (Դավիթ Բեկի փողոցի 1/22 հասցե), 18-րդ՝ «Հողամասերի նպատակային նշանակությունները փոխելու մասին» (Սևանի փողոց հ.21/4, 21/12, 21/13 հասցեներ), 19-րդ՝ «Հողամասերի նպատակային նշանակությունները փոխելու մասին» (Ներքին Չարբախ թաղամաս հ.37 հասցե) և 20-րդ՝ «Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին» (Թբիլիսյան խճուղի հ.29/3 հասցե) ավագանու որոշումների նախագծերը քննարկել չզեկուցվող հարցերին ներկայացվող ընթացակարգին համաձայն:

Առաջարկը դրվեց քվեարկության.

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 50 անդամ
ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 39, դեմ՝ 7, ձեռնպահ՝ 4

Առաջարկն ընդունվել է ձայների մեծամասնությամբ:

Համաձայն քվեարկության արդյունքների՝ որոշվեց օրակարգի նախագծի 17-րդ՝ «Հողամասերի նպատակային նշանակությունները փոխելու մասին» (Դավիթ Բեկի փողոցի 1/22 հասցե), 18-րդ՝ «Հողամասերի նպատակային նշանակությունները փոխելու մասին» (Սևանի փողոց հ.21/4, 21/12, 21/13 հասցեներ), 19-րդ՝ «Հողամասերի նպատակային նշանակությունները փոխելու մասին» (Ներքին Չարբախ թաղամաս հ.37 հասցե) և 20-րդ՝ «Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին» (Թբիլիսյան խճուղի հ.29/3 հասցե) ավագանու զեկուցվող որոշումների նախագծերը քննարկել չզեկուցվող հարցերին ներկայացվող ընթացակարգին համաձայն:

Երևանի ավագանու ԼՈՒՅՍ խմբակցության քարտուղար Անի Խաչատրյանն առաջարկեց 2023 թվականի փետրվարի 14-ի հերթական նիստի օրակարգի նախագծի 8-րդ չզեկուցվող հարցը՝ «Երևան քաղաքի ավագանու 2021 թվականի փետրվարի 9-ի N325-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» քննարկել զեկուցվող հարցերին ներկայացվող ընթացակարգին համաձայն:

Առաջարկը դրվեց քվեարկության.

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 48 անդամ
ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 15, դեմ՝ 13, ձեռնպահ՝ 16

Առաջարկն չընդունվեց:

Երևանի քաղաքապետ Հրաչյա Սարգսյանը ներկայացրեց Երևանի ավագանու 2023 թվականի փետրվարի 14-ի հերթական նիստի օրակարգի նախագիծը.

1. Երևանի ավագանու 10-րդ նստաշրջանի 1-ին նիստի օրակարգը հաստատելու մասին:
2. Երևանի ավագանու 10-րդ նստաշրջանի ժամանակավոր հաշվիչ հանձնաժողովի կազմը հաստատելու մասին: (Չզեկուցվող)
3. «Գրիգոր Նարեկացի» բժշկական կենտրոն փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության փոփոխությունը հաստատելու մասին: (Չզեկուցվող)
4. «Երևան» բժշկական կենտրոն փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության փոփոխությունը հաստատելու մասին: (Չզեկուցվող)
5. «Գույքը սեփականության իրավունքով անհատույց հանձնելու մասին: (Չզեկուցվող)
6. Գույք նվիրաբերելու մասին: (Չզեկուցվող)
7. 2009 թվականից մինչև 2017 թվականը ներառյալ ժամանակահատվածում առաջացած, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի արխիվում պահպանվող, Երևան համայնքի սեփականությունը համարվող որոշ արխիվային փաստաթղթերի սեփականության իրավունքը պետական արխիվային սեփականության փոխանցելու մասին: (Չզեկուցվող)

8. Երևան քաղաքի ավագանու 2021 թվականի փետրվարի 9-ի N325-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին: (Չզեկուցվող)

9. Կազմակերպված ծառայողական ավտոկայանատեղերի շահագործումը շարունակելու իրավունք տալու մասին: (Չզեկուցվող)

10. Երևան քաղաքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 27-ի N693-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին: (Չզեկուցվող)

11. Երևան քաղաքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 27-ի N693-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին: (Չզեկուցվող)

12. Երևան քաղաքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 27-ի N693-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին: (Չզեկուցվող)

13. Հողամասերի նպատակային նշանակությունները փոխելու մասին: (Չզեկուցվող)

14. Հողամասերի նպատակային նշանակությունները փոխելու մասին: (Չզեկուցվող)

15. Հողամասերի նպատակային նշանակությունները փոխելու մասին: (Չզեկուցվող)

16. Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին: (Չզեկուցվող)

17. Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի հոկտեմբերի 29-ի N10-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

18. Երևան համայնքի վարչական տարածքում հանրային սննդի ծառայություն մատուցող անձանց տվյալ օբյեկտին հարակից ընդհանուր օգտագործման տարածքներում ամառային (մայիսի 1-ից մինչև հոկտեմբերի 31-ը ներառյալ) և ձմեռային (նոյեմբերի 1-ից մինչև ապրիլի 30-ը ներառյալ) սեզոններին հանրային սննդի ծառայության կազմակերպման համար տարածքի օգտագործման կարգը, պայմաններն ու սահմանափակումները սահմանելու մասին:

19. Երևան քաղաքի ավագանու 2022 թվականի սեպտեմբերի 23-ի N632-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին:

20. Երևան քաղաքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 28-ի N497-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

21. Երևան քաղաքի ավագանու կողմից անշարժ գույքի հարկի և փոխադրամիջոցի գույքահարկի արտոնություններ սահմանելու և համայնքի բյուջեից վճարում կատարելու մասին:

22. Երևան քաղաքում Սվետլանա Գրիգորյանի անվամբ փողոց անվանակոչելու մասին:

23. Երևան քաղաքում Լուսինե Զաքարյանի անվամբ փողոց անվանակոչելու մասին:

24. Երևան քաղաքում Ժիրայր Անանյանի անվամբ փողոց անվանակոչելու մասին:

1. ԼՍԵՑԻՆ – Երևանի ավագանու 10-րդ նստաշրջանի 1-ին նիստի օրակարգը հաստատելու մասին:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 48 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 45, դեմ՝ 2, ձեռնպահ՝ 1

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ:

Երևանի քաղաքապետ Հրաչյա Սարգսյանը հայտնեց, որ հիմք ընդունելով Երևան քաղաքի ավագանու 18.06.2009թ. N1-Ն որոշման 114-րդ կետի 5-րդ ենթակետը առաջնահերթ քվեարկության են դրվում օրակարգում ընդգրկված չզեկուցվող՝ 2-ից 16-րդ հարցերը:

Համաձայն 114-րդ կետի 5.1 ենթակետի՝ օրակարգում ընդգրկված չզեկուցվող հարցերը քվեարկվում են մեկ քվեարկությամբ, ընդ որում՝ ավագանու անդամի կողմ, դեմ կամ ձեռնպահ քվեարկությունը համարվում է համապատասխանաբար կողմ, դեմ կամ ձեռնպահ քվեարկված յուրաքանչյուր նախագծին:

Հարց 2. – Երևանի ավագանու 10-րդ նստաշրջանի ժամանակավոր հաշվիչ հանձնաժողովի կազմը հաստատելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ - 1. Հաստատել Երևանի ավագանու 10-րդ նստաշրջանի ժամանակավոր հաշվիչ հանձնաժողովի կազմը՝ համաձայն հավելվածի:

Հարց 3. – «Գրիգոր Նարեկացի» բժշկական կենտրոն փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության փոփոխությունը հաստատելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ - 1. Հաստատել Երևանի ենթակայության «Գրիգոր Նարեկացի» բժշկական կենտրոն փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության փոփոխությունը՝ համաձայն հավելվածի:

Հարց 4. – «Երևան» բժշկական կենտրոն փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության փոփոխությունը հաստատելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ - 1. Հաստատել Երևանի ենթակայության «Երևան» բժշկական կենտրոն փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության փոփոխությունը՝ համաձայն հավելվածի:

Հարց 5. – Գույքը սեփականության իրավունքով անհատույց հանձնելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ - 1. Երևան համայնքի սեփականություն համարվող գույքը (երաժշտական գործիքներ), ընդհանուր՝ 48487000 (քառասունութ միլիոն չորս հարյուր ութսունյոթ հազար) ՀՀ դրամ հաշվեկշռային արժեքով, սեփականության իրավունքով անհատույց հանձնել (նվիրել) Երևանի ենթակայության երաժշտական և արվեստի դպրոցներին՝ համաձայն հավելվածի:

Հարց 6. – Գույք նվիրաբերելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ - 1. Երևան համայնքի սեփականություն համարվող սույն որոշման հավելվածում նշված երաժշտական գործիքները, ընդհանուր 7701.0 հազ. (յոթ միլիոն յոթ հարյուր մեկ հազար) ՀՀ դրամ հաշվեկշռային արժեքով, նվիրաբերել Արցախի Հանրապետությանը՝ ի դեմս Արցախի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության, Արցախի Հանրապետության երաժշտական և արվեստի դպրոցներում օգտագործելու նպատակով:

2. Առաջարկել Երևանի քաղաքապետին՝ Արցախի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության հետ կնքել նվիրաբերության պայմանագիր:

Հարց 7. – 2009 թվականից մինչև 2017 թվականը ներառյալ ժամանակահատվածում առաջացած, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի արխիվում պահպանվող, Երևան համայնքի սեփականությունը համարվող որոշ արխիվային փաստաթղթերի սեփականության իրավունքը պետական արխիվային սեփականության փոխանցելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ - 1. 2009 թվականից մինչև 2017 թվականը ներառյալ ժամանակահատվածում առաջացած, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմում պահպանվող, Երևան համայնքի սեփականություն համարվող սույն որոշման 1-ին կետի 1-ին, 2-րդ, ենթակետերով նշված արխիվային փաստաթղթերի նկատմամբ սեփականության իրավունքը փոխանցել «Հայաստանի ազգային արխիվ» պետական ոչ առևտրային կազմակերպությանը:

1) Երևանի քաղաքապետարանի կողմից համաձայնեցված 2009-2013թթ. ճարտարապետական աշխատանքային նախագծեր և քանդման թույլտվություններ.

2) աշխատակազմի քաղաքաշինության և հողի վերահսկողության վարչության ավարտված շինարարությունն ընդունող հանձնաժողովի 2013-2017թթ. մշտական պահպանության ակտեր:

Հարց 8. – Երևան քաղաքի ավագանու 2021 թվականի փետրվարի 9-ի N325-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ - 1. Ուժը կորցրած ճանաչել Երևան քաղաքի ավագանու 2021 թվականի փետրվարի 09-ի «Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի հոկտեմբերի 29-ի N10-Ա որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» N 325-Ա որոշումը:

Հարց 9. – Կազմակերպված ծառայողական ավտոկայանատեղերի շահագործումը շարունակելու իրավունք տալու մասին:

ՈՐՈՇՎԵՑ - 1. Թույլատրել սույն որոշման հավելվածում նշված անձանց՝ 2023 թվականի ընթացքում շարունակելու հավելվածում նշված տարածքներում և սահման-ված պայմաններով նախորդ տարիներին կազմակերպված ծառայողական ավտոկայանատեղերի շահագործումը:

Հարց 10. – Երևան քաղաքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 27-ի N693-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ - 1. Երևան քաղաքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 27-ի «Երևան քաղաքի 2023 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 693-Ն որոշման NN 1, 2, 3, 6 և 7 հավելվածներում կատարել փոփոխություններ՝ համաձայն սույն որոշման համապատասխանաբար NN 1-5 հավելվածների:

2. Որոշման N 6 և N 7 հավելվածներով սահմանված «2. Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող Իսակով-Արշակունյաց ճանապարհահատվածի կառուցման ծրագիր (պատվիրակված լիազորություններ)» ծրագրի անվանումը վերանվանել «2. Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող քաղաքային կանաչ զարգացման ներդրումային ծրագիր (պատվիրակված լիազորություններ) » անվամբ:

3. Որոշման 2-րդ մասի «2,672,754.4» թիվը փոխարինել «2,611,329.8» թվով:

Հարց 11. – Երևան քաղաքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 27-ի N693-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ - 1. Երևան քաղաքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 27-ի «Երևան քաղաքի 2023 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 693-Ն որոշման NN 1, 2, 3, 6 և 7 հավելվածներում կատարել փոփոխություններ՝ համաձայն սույն որոշման համապատասխանաբար NN 1-5 հավելվածների:

Հարց 12. – Երևան քաղաքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 27-ի N693-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ - 1. Երևան քաղաքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 27-ի «Երևան քաղաքի 2023 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 693-Ն որոշման NN 2, 3, 4, 5, 6 և 7 հավելվածներում կատարել փոփոխություններ՝ համաձայն NN 1-6 հավելվածների:

Հարց 13. – Հողամասերի նպատակային նշանակությունները փոխելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ - 1. Երևան քաղաքի Դավիթ Բեկի փողոցի հ.1/22 հասցեում գտնվող Դավիթ Քոչարյանին սեփականության իրավունքով պատկանող 0.111938հա և ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող 0.035048հա մակերեսներով հողամասերի նպատակային նշանակությունները փոխադրել «բնակավայրերի» հողերի կատեգորիա:

2. Երևանի քաղաքապետին՝ սույն որոշման 1-ին կետով հողամասերի նպատակային նշանակության կատարված փոփոխության մասին 10-օրյա ժամկետում, օրենսդրությամբ սահմանված կարգով, տեղեկացնել Կադաստրի կոմիտե և Քաղաքաշինության կոմիտե՝ կցելով սույն որոշման սահմանված կարգով հաստատված պատճենները:

Հարց 14. – Հողամասերի նպատակային նշանակությունները փոխելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ - 1. Երևան քաղաքի Սևանի փողոց հ.21/4, հ.21/12, հ.21/13 հասցեներում գտնվող սեփականության իրավունքով «Շանթ» ՍՊԸ-ին պատկանող (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.07032022-01-0241, հ.05012022-01-0334 և հ.07032022-01-0236 վկայականներ) համապատախանաբար 1.325հա, 0.19548հա և 0.8663հա մակերեսներով հողամասերի նպատակային նշանակությունները «արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների» և

«էներգետիկայի, տրանսպորտի, կապի կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների» հողերի կատեգորիայից փոխադրել «բնակավայրերի» հողերի կատեգորիա:

2. Երևանի քաղաքապետին՝ սույն որոշման 1-ին կետով հողամասի նպատակային նշանակության կատարված փոփոխության մասին 10-օրյա ժամկետում, օրենսդրությամբ սահմանված կարգով, տեղեկացնել Կադաստրի կոմիտե և Քաղաքաշինության կոմիտե՝ կցելով սույն որոշման սահմանված կարգով հաստատված պատճենները:

Հարց 15. – Հողամասերի նպատակային նշանակությունները փոխելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ - 1. Երևան քաղաքի Ներքին Չարբախ թաղամաս հ.37 հասցեում գտնվող սեփականության իրավունքով Արայիկ Բաբայանին պատկանող /անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.16112021-01-0199 վկայական/ 280.0քմ և ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով վերջինիս պատկանող /անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.03022021-01-0218 վկայական/ 586.56քմ մակերեսներով հողամասերի նպատակային նշանակությունները փոփոխել «բնակավայրերի»:

2. Երևանի քաղաքապետին՝ սույն որոշման 1-ին կետով հողամասի նպատակային նշանակության կատարված փոփոխության մասին 10-օրյա ժամկետում, օրենսդրությամբ սահմանված կարգով, տեղեկացնել Կադաստրի կոմիտե և Քաղաքաշինության կոմիտե՝ կցելով սույն որոշման սահմանված կարգով հաստատված պատճենները:

Հարց 16. – Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ - 1. Երևան քաղաքի Թբիլիսյան խճուղի հ.29/3 հասցեում գտնվող ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով Նիկիտա Բերեզինին և Դանիլա Բերեզինին պատկանող /անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.26092022-01-0013 վկայական/ 6421.9քմ մակերեսով հողամասի նպատակային նշանակությունը «էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների» հողերի կատեգորիայից փոփոխել «բնակավայրերի» հողերի կատեգորիայի:

2. Երևանի քաղաքապետին՝ սույն որոշման 1-ին կետով հողամասի նպատակային նշանակության կատարված փոփոխության մասին 10-օրյա ժամկետում, օրենսդրությամբ սահմանված կարգով, տեղեկացնել Կադաստրի կոմիտե և Քաղաքաշինության կոմիտե՝ կցելով սույն որոշման սահմանված կարգով հաստատված պատճենները:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 50 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 38, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 12

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ:

Ելույթներով հանդես եկան Երևան քաղաքի ավագանու անդամ Իզաբելլա Աբգարյանը, Սերգեյ Գյոզալյանը և ԼՈՒՅՍ խմբակցության քարտուղար Անի Խաչատրյանը:

Երևանի քաղաքապետ Հրաչյա Սարգսյանը տեղեկացրեց, որ այժմ քննարկման է ներկայացվում 2023 թվականի փետրվարի 14-ի հերթական նիստի զեկուցվող հարցերը.

17. ԼՍԵՑԻՆ - Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի հոկտեմբերի 29-ի N10-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ–Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ Լևոն Հովհաննիսյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարցեր ուղղելու համար գրանցվել են ավագանու 8 անդամ.

1. Արման Անտոնյան – Երևան քաղաքի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ
2. Էռնեստ Ավանեսով-Երևան քաղաքի ավագանու անդամ
3. Թեհմինա Վարդանյան-Երևան քաղաքի ավագանու ԼՈՒՅՍ խմբակցության անդամ
4. Մարկոս Հարությունյան - Երևան քաղաքի ավագանու ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության քարտուղար
5. Միքայել Մանրիկյան - Երևան քաղաքի ավագանու ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության ղեկավար
6. Անի Խաչատրյան-Երևան քաղաքի ավագանու ԼՈՒՅՍ խմբակցության քարտուղար
7. Անահիտ Ասատրյան- Երևան քաղաքի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ
8. Լևոն Զաքարյան- Երևան քաղաքի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

Բարձրացված հարցերի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեց Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ Լևոն Հովհաննիսյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Լուսինե Գևորգյանը տեղեկացրեց, որ «Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի հոկտեմբերի 29-ի N10-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

«Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի հոկտեմբերի 29-ի N10-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ավագանու որոշման նախագծի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեցին Երևանի քաղաքապետ Հրաչյա Սարգսյանը, Երևանի քաղաքապետի տեղակալ Տիգրան Ավինյանը և քաղաքապետի խորհրդական Սաշա Կատվալյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթների համար գրանցվել են ավագանու 8 անդամ.

1. Անի Խաչատրյան-Երևան քաղաքի ավագանու ԼՈՒՅՍ խմբակցության քարտուղար

2. Հայկ Միրզոյան - Երևան քաղաքի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

3. Արմեն Ներսիսյան- Երևան քաղաքի ավագանու ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության անդամ

4. Մարկոս Հարությունյան- Երևան քաղաքի ավագանու ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության քարտուղար

5. Լուսինե Գևորգյան- Երևան քաղաքի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

6. Իզաբելլա Աբգարյան-Երևան քաղաքի ավագանու անդամ

7. Դավիթ Խաժակյան-Երևան քաղաքի ավագանու ԼՈՒՅՍ խմբակցության ղեկավար

8. Անահիտ Ասատրյան- Երևան քաղաքի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

Արտահերթ ելույթով հանդես եկավ Երևան քաղաքի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության ղեկավար Արմեն Գալջյանը:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի հոկտեմբերի 29-ի «Երևանի քաղաքապետարանի և վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմերի կառուցվածքը, հաստիքացուցակը, աշխատակիցների թվաքանակը, Երևանի քաղաքապետի, նրա տեղակալների, խորհրդականների, օգնականների, մամուլի քարտուղարի, քաղաքապետարանի աշխատակազմի աշխատակիցների, վարչական շրջանների ղեկավարների, ղեկավարների տեղակալների, վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմերի աշխատակիցների պաշտոնային դրույքաչափերը հաստատելու և Երևան քաղաքի ավագանու 2017 թվականի հունիսի 16-ի N16-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N10-Ա որոշման N2 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 51 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 43, դեմ՝ 3, ձեռնպահ՝ 5

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ:

Ընդմիջում.

Նիստը վերսկսվեց ժամը 14.30-ին:

Նիստի վարում էր Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ Լևոն Հովհաննիսյանը:

18. ԼՍԵՑԻՆ - Երևան համայնքի վարչական տարածքում հանրային սննդի ծառայություն մատուցող անձանց տվյալ օբյեկտին հարակից ընդհանուր օգտագործման տարածքներում ամառային (մայիսի 1-ից մինչև հոկտեմբերի 31-ը ներառյալ) և ձմեռային (նոյեմբերի 1-ից մինչև ապրիլի 30-ը ներառյալ) սեզոններին հանրային սննդի ծառայության կազմակերպման համար տարածքի օգտագործման կարգը, պայմաններն ու սահմանափակումները սահմանելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ – Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի առևտրի և ծառայությունների վարչության պետ Հովիկ Սաֆարյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարցեր ուղղելու համար գրանցվել են ավագանու 8 անդամ.

1. Իզաբելլա Աբգարյան-Երևան քաղաքի ավագանու անդամ
2. Մարկոս Հարությունյան-Երևան քաղաքի ավագանու ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության քարտուղար
3. Լևոն Զաքարյան-Երևան քաղաքի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ
4. Սերգեյ Գյոզալյան- Երևան քաղաքի ավագանու անդամ
5. Դիանա Քերոբյան- Երևան քաղաքի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ
6. Արման Բաբաջանյան - Երևան քաղաքի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ
7. Միքայել Մանրիկյան-Երևան քաղաքի ավագանու ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության ղեկավար
8. Մանուել Մարգարյան- Երևան քաղաքի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

Բարձրացված հարցերի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեց քաղաքապետարանի աշխատակազմի առևտրի և ծառայությունների վարչության պետ Հովիկ Սաֆարյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Լուսինե Գևորգյանը տեղեկացրեց, որ «Երևան համայնքի վարչական տարածքում հանրային սննդի ծառայություն մատուցող անձանց տվյալ օբյեկտին հարակից ընդհանուր օգտագործման տարածքներում ամառային (մայիսի 1-ից մինչև հոկտեմբերի 31-ը ներառյալ) և ձմեռային (նոյեմբերի 1-ից մինչև ապրիլի 30-ը ներառյալ) սեզոններին հանրային սննդի ծառայության կազմակերպման համար տարածքի օգտագործման կարգը, պայմաններն ու սահմանափակումները սահմանելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Լուսինե Գևորգյանին հարց ուղղելու գրանցվել է ավագանու 1 անդամ.

1. Հայկ Միրզոյան- Երևան քաղաքի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

Բարձրացված հարցի վերաբերյալ պարզաբանում ներկայացրեց Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Լուսինե Գևորգյանը:

«Երևան համայնքի վարչական տարածքում հանրային սննդի ծառայություն մատուցող անձանց տվյալ օբյեկտին հարակից ընդհանուր օգտագործման տարածքներում ամառային (մայիսի 1-ից մինչև հոկտեմբերի 31-ը ներառյալ) և ձմեռային (նոյեմբերի 1-ից մինչև ապրիլի 30-ը ներառյալ) սեզոններին հանրային սննդի ծառայության կազմակերպման համար տարածքի օգտագործման կարգը, պայմաններն

ու սահմանափակումները սահմանելու մասին» ավագանու որոշման նախագծի վերաբերյալ ելույթ ունեցավ Երևանի քաղաքապետի խորհրդական Կամո Արեյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթների համար գրանցվել են ավագանու 3 անդամ.

1. Նուարդ Վարդանյան-Երևան քաղաքի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ
2. Լևոն Զաքարյան-Երևան քաղաքի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ
3. Աշոտ Սարգսյան-Երևան քաղաքի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

Արտահերթ ելույթով հանդես եկավ Երևան քաղաքի ավագանու ԼՈՒՅՍ խմբակցության ղեկավար Դավիթ Խաժակյանը:

Եզրափակիչ ելույթներով հանդես եկան Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Լուսինե Գևորգյանը և քաղաքապետարանի աշխատակազմի առևտրի և ծառայությունների վարչության պետ Հովիկ Սաֆարյանը:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Սահմանել Երևան համայնքի վարչական տարածքում հանրային սննդի ծառայություն մատուցող անձանց տվյալ օբյեկտին հարակից ընդհանուր օգտագործման տարածքներում ամառային (մայիսի 1-ից մինչև հոկտեմբերի 31-ը ներառյալ) և ձմեռային (նոյեմբերի 1-ից մինչև ապրիլի 30-ը ներառյալ) սեզոններին հանրային սննդի ծառայության կազմակերպման համար տարածքի օգտագործման կարգը, պայմաններն ու սահմանափակումները՝ համաձայն հավելվածի:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 46 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 45, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 1

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ:

19. ԼՍԵՑԻՆ - Երևան քաղաքի ավագանու 2022 թվականի սեպտեմբերի 23-ի N632-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ–Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի առևտրի և ծառայությունների վարչության պետ Հովիկ Սաֆարյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Լուսինե Գևորգյանը տեղեկացրեց, որ «Երևան քաղաքի ավագանու 2022 թվականի սեպտեմբերի 23-ի N632-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթների համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի ավագանու 2022 թվականի սեպտեմբերի 23-ի «Երևան համայնքի վարչական տարածքում «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքով նախատեսված թույլտվությունների տրամադրման կարգը սահմանելու

մասին» N632-Ն որոշման հավելվածի 3-րդ կետում «դիմում» բառից հետո լրացնել «(ոգելից և ալկոհոլային խմիչքների կամ ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների (բացառությամբ բժշկական նշանակության ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների) կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառքի և հանրային սննդի կազմակերպման և իրականացման (համայնքի ավագանու որոշմամբ սահմանված կանոններին համապատասխան)՝ տնտեսավարողի գործունեության համար առանձնացված յուրաքանչյուր վայրում հանրային սննդի կազմակերպման և իրականացման թույլտվություններ ստանալու համար դիմումները ներկայացվում են միայն էլեկտրոնային եղանակով)» բառերը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 39 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 38, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 1

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ:

20. ԼՍԵՑԻՆ - Երևան քաղաքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 28-ի N497-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ–Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ Վիլեն Արևշատյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Լուսինե Գևորգյանը տեղեկացրեց, որ «Երևան քաղաքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 28-ի N497-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթի համար գրանցվել է ավագանու 1 անդամ.

1. Սերգեյ Գյոզալյան-Երևան քաղաքի ավագանու անդամ

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 28-ի «Երևան քաղաքի 2022 թվականի բյուջեի մասին» N 497-Ն որոշման NN 1, 2, 3, 6 և 7 հավելվածներում կատարել փոփոխություններ՝ համաձայն սույն որոշման համապատասխանաբար NN 1-5 հավելվածների:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 46 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 44, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0

Որոշումն ընդունվել է միաձայն:

21. ԼՍԵՑԻՆ - Երևան քաղաքի ավագանու կողմից անշարժ գույքի հարկի և փոխադրամիջոցի գույքահարկի արտոնություններ սահմանելու և համայնքի բյուջեից վճարում կատարելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ – Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի եկամուտների հաշվառման և գանձման վարչության պետի պաշտոնակատար Արման Ջհանգիրյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարց ուղղելու համար գրանցվել է ավագանու 1 անդամ.

1. Մարկոս Հարությունյան-Երևան քաղաքի ավագանու ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության քարտուղար

Բարձրացված հարցի վերաբերյալ պարզաբանում ներկայացրեց քաղաքապետարանի աշխատակազմի եկամուտների հաշվառման և գանձման վարչության պետի պաշտոնակատար Ա. Ջհանգիրյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Լուսինե Գևորգյանը տեղեկացրեց, որ «Երևան քաղաքի ավագանու կողմից անշարժ գույքի հարկի և փոխադրամիջոցի գույքահարկի արտոնություններ սահմանելու և համայնքի բյուջեից վճարում կատարելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթների համար գրանցվել են ավագանու 3 անդամ.

1. Մարկոս Հարությունյան-Երևան քաղաքի ավագանու ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության քարտուղար

2. Արմեն Ներսիսյան-Երևան քաղաքի ավագանու ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության անդամ

3. Աշոտ Սարգսյան-Երևան քաղաքի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

Ելույթի վերաբերյալ պարզաբանում ներկայացրեց Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ Լևոն Հովհաննիսյանը, աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետ Վահան Խաչատրյանը:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Սույն որոշման 2-րդ կետում նշված անձանց Երևան քաղաքում սեփականության իրավունքով պատկանող և անշարժ գույքի հարկով հարկման օբյեկտ համարվող բնակելի նշանակության շինությունների և փոխադրամիջոցի գույքահարկի գծով սահմանել արտոնություն՝ ազատելով 2021-2022 թվականների համար հաշվարկված հարկային պարտավորությունների և հաշվարկված տույժի վճարումից 9,531,611.0 (ինը միլիոն հինգ հարյուր երեսունմեկ հազար վեց հարյուր տասնմեկ) ՀՀ դրամի չափով՝ համաձայն N 1-12 հավելվածների և դրանց մասով անշարժ գույքի հարկ և փոխադրամիջոցի գույքահարկ վճարողի փոխարեն համայնքի բյուջեից կատարել վճարում:

2. Սույն որոշմամբ սահմանված արտոնությունները կիրառվում են հետևյալ քաղաքացիների խմբերի նկատմամբ.

1) Արցախյան (Լեռնային Ղարաբաղի) և Հայաստանի Հանրապետության պաշտպանության մարտական գործողությունների կամ հակառակորդի հետ շփման գծում մարտական հերթապահության կամ հատուկ առաջադրանքներ կատարելու կամ հակառակորդի նախահարձակ գործողությունների հետևանքով զոհված, վիրավորված և ստացած վնասվածքներից հաջորդող տարիների ընթացքում մահացածների ընտանիքների անդամներ,

2) Արցախյան (Լեռնային Ղարաբաղի) և Հայաստանի Հանրապետության պատերազմների 1-ին և 2-րդ խմբի զինհաշմանդամներ, որոնք անշարժ գույքի հարկով և (կամ) փոխադրամիջոցի գույքահարկով հարկման օբյեկտ համարվող բնակելի նշանակության շինությունը և (կամ) փոխադրամիջոցը ձեռք են բերել մինչև Երևան քաղաքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 27-ի N 690-Ն որոշումն ուժի մեջ մտնելը,

3) Հայաստանի Հանրապետության պաշտպանության մարտական գործողությունների կամ հակառակորդի հետ շփման գծում մարտական հերթապահության կամ հատուկ առաջադրանքներ կատարելու կամ հակառակորդի նախահարձակ գործողությունների հետևանքով գերեվարված, անհայտ բացակայող կամ մահացած ճանաչված (կամ նրանց ընտանիքի անդամներին) անձինք:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 46 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 46, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0

Որոշումն ընդունվել է միաձայն:

22. ԼՍԵՑԻՆ - Երևան քաղաքում Սվետլանա Գրիգորյանի անվամբ փողոց անվանակոչելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ – Երևան քաղաքի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Արման Անտոնյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Հայկ Միրզոյանը տեղեկացրեց, որ «Երևան քաղաքում Սվետլանա Գրիգորյանի անվամբ փողոց անվանակոչելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթների համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի Արաբկիրի 35-րդ փողոցն անվանակոչել հայ դերասանուհի, ՀԽՍՀ ժողովրդական արտիստ, Երևանի պատվավոր քաղաքացի Սվետլանա Գրիգորյանի անվամբ՝ «Սվետլանա Գրիգորյան փողոց»:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 37 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 35, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0

Որոշումն ընդունվել է միաձայն:

23. ԼՍԵՑԻՆ - Երևան քաղաքում Լուսինե Զաքարյանի անվամբ փողոց անվանակոչելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ – Երևան քաղաքի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Արման Անտոնյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Հայկ Միրզոյանը տեղեկացրեց, որ «Երևան քաղաքում Լուսինե Զաքարյանի անվամբ փողոց անվանակոչելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթների համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի Նորքի 7-րդ փողոցն անվանակոչել հայ երգչուհի, Կոմիտասի, հայ հոգևոր երգերի ու տաղերի կատարող Լուսինե Զաքարյանի անվամբ՝ «Լուսինե Զաքարյան փողոց»:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 39 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 37, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0

Որոշումն ընդունվել է միաձայն:

24. ԼՍԵՑԻՆ - Երևան քաղաքում Ժիրայր Անանյանի անվամբ փողոց անվանակոչելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ – Երևան քաղաքի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Զարուհի Աղաջանյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցող հարց ուղղելու համար գրանցվել է ավագանու 1 անդամ.

1. Սերգեյ Գյոզալյան-Երևան քաղաքի ավագանու անդամ

Բարձրացված հարցի վերաբերյալ պարզաբանում ներկայացրեց Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ Լևոն Հովհաննիսյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Հայկ Միրզոյանը տեղեկացրեց, որ «Երևան քաղաքում Ժիրայր Անանյանի անվամբ փողոց անվանակոչելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթի համար գրանցվել է ավագանու 1 անդամ.

1. Արման Անտոնյան-Երևան քաղաքի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի Արաբկիրի 33-րդ փողոցն անվանակոչել հայ դրամատուրգ Ժիրայր Անանյանի անվամբ՝ «Ժիրայր Անանյան փողոց»:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 43 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 43, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0

Որոշումն ընդունվել է միաձայն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ ՀՐԱՉՅԱ ՍԱՐԳՍՅԱՆ

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ ԼԵՎՈՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Կազմեց՝
Ն. Ղուկասյան